Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ

Ի պատասխան № A-17EN/A-20EN «Երևան քաղաքի Հ.Կարապենցի անվան թիվ 6 հիմնական դպրոցի կառուցում» և «Երևան քաղաքի Ղևոնդ Ալիշանի անվան թիվ 95 հիմնական դպրոցի կառուցում» շինարարական աշխատանքների գնման մրցույթի վերաբերյալ 2020/06/04 ժամը 13:39:10 և 13:50:14 Armeps համակարգով և 2020/06/02 ժամը 12:10 և 13:08, 2020/06/03 ժամը 16:07 էլ-փոստով ստացված հարցումներին ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները.

Հարց 1 /վերաձևակերպած/՝ «XXXXXX» ՍՊԸ-ն հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ կազմակերպություն, որը հիմնադրել է նույն ընկերության Հայաստանի մասնաճյուղը:
Կարո՞ղ է (իրավասու է) արդյոք վերնշված մրցույթում «XXXXXX» ՍՊԸ–ի փոխարեն որպես հայտատու հանդես գալ Ընկերության մասնաճյուղը:

Պատասխան՝ Ինչպես նշված է մրցույթի Հայտերի ներկայացման հրավերում. «Մրցույթը բաց է բոլոր իրավասու հայտատուների համար Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) անդամ-երկներից»: ԱԶԲ-ի անդամ-երկների ցանկի հետ կարելի ցանոթանալ վերոնշյալ մրցութային փաթեթի Բաժին 5-ում: Այդ ցանկում Ռուսաստանի Դաշնությունը (ՌԴ) ընդգրկված չէ և համաձայն ՀՀ քաղաքացիական օրենցգրքի Հոդված 61-ի («Ներկայացուցչություններ և մասնաճյուղեր») 3-րդ ենթակետի «մասնաճյուղերն իրավաբանական անձինք չեն ու գործում են իրավաբանական անձի հաստատած կանոնադրությունների հիման վրա»: Ըստ այդմ ՌԴ-ում գրնցված ընկերության հայաստանյան մասնաճյուղը ներկայացնում է ռուսաստանյան ընկերությունը և ըստ մցրութային պայամանների չի կարող մասնակցել տվյալ մրցույթին:

Հարց 2՝ «Թիվ 6 դպրոցի ծավալաթերթի 569 տողում կա սխալմունք կամ անհասկանալի է: Խնդրում եմ պարզաբանեք:»

Պատասխան՝ A-17EN/A-20EN «Երևան քաղաքի Հ.Կարապենցի անվան թիվ 6 հիմնական դպրոցի կառուցում» մրցույթի նախահաշվում Excel ֆայլի նշված 569 տողում (Նախահաշվի 24-րդ «Հենապատեր, ցանկապատ և նստարաններ» բանժնի 33-րդ տողի նկարագրության մեջ առկա վրիպակը փոխարինվել է հետևյալ շարադրանքով. «գոյություն ունեցող մետաղական h-1.5մ ճաղաշարի ապամոնտաժում» /փոփոխությունը առկա է նախահաշվի շտկված տարբերակում/:

Հարց 3՝ «Այցելել ենք թիվ 6 և թիվ 95 դպրոցների տարածքներ: Երկու դպրոցներում էլ ըստ նախագծի պետք է իրականացվեն քնդման աշխատանքներ: Սակայն մրցութային Ծավալաթերթերում քանդման աշխատանքների բաժին կամ ծավալներ ներառված չեն: Խնդրում ենք պարզաբանել:»

Պատասխան՝ մրցութային Ծավալաթերթերում քանդման աշխատանքների բաժին կամ ծավալներ ներառված չլինելու դեպքում պետք է ղեկավարվել մրցութային փաստաթղթի Բաժին 8 «Պայմանագրի հատուկ պայմաններ» **ՊԸՊ 21.1 կետով.**

ՊԸՊ 21.1	Շինարարական Աշխատանքների իրականացումը Կապալառուի կողմից՝

	Դպրոցների քանդման աշխատանքները իրականացվում են ՀՀ կառավարության 06.02.2019թ., թիվ 87-Ա որոշման 2-րդ կետի դրույթի համապատասխան, համաձայն որի շենքի քանդման արդյունքում ձևավորվելիք շինանյութը սեփականության իրավունքով անհատույց հանձնվում է Կապալառուին: **Քանդման (ներառյալ շենքի հիմքերի) և շինարարական աղբի տեղափոխման աշխատանքները, որոնք նախատեսված չեն *Պայմանագրի Նախահաշվով*, սակայն անհրաժեշտ են շինարարական աշխատանքներն ըստ նախագծի իրականացնելու համար, արվում են Կապալառուի հաշվին:**

<u>Հարց 4</u>՝ «Թիվ 6 և թիվ 95 դպրոցների ծավալաթերթերում արտաքին էլեկտրամատակարարման գնահատման համար առկա են համապատասխանաբար 6-րդ դպրոցում 44-րդ բաժինը և 95-րդ դպրոցում 24 բաժինը, որտեղ նշված են Հայաստանի էլեկտրական ցանցերի կոնկրետ գրություններ՝ համարներով և ամսաթվերով: Այդ գրությունները մատնանշելուն զուգահեռ կարող էին և նպատակահարմար կլիներ դրանք ներառել մրցութային փաթեթում, որը կարելի իրականացնել նաև այժմ:
Բացի այդ, մեր տեղեկացվածությունը հետևյալն է - Գործող կարգով արտաքին էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանի տրամադրումը, նախագծումը, գնահատումը և իրականացումը միայն ՀԷՑ-ի իրավասության տիրույթում է: Հետևաբար որպես մասնակից պարզաբանում ստանալու կարիք ունենք, կարցում ենք մյուս մասնակիցները նույնպես:»

<u>Պատասխան՝</u> Արտաքին էլեկտրամատակարարման ցանցի իրականացման աշխատանքների գնահատման համար հիմք պետք է ընդունել համապատասխան բաժնում նշված ՀԾԿՀ-ի որոշումը: Ծավալաթերթում կատարվել են համապատասխան ճշտումներ:

<u>Հաշվի առնելով Ծավալաթերթում կատարված փոփոխությունները № A-17EN/A-20EN «Երևան քաղաքի Հ.Կարապետնցի անվան թիվ 6 հիմնական դպրոցի կառուցում» և «Երևան քաղաքի Ղևոնդ Ալիշանի անվան թիվ 95 հիմնական դպրոցի կառուցում» շինարարական աշխատանքների գնման մրցույթի հայտերի ներկայացման ժամկետը երկարացվում է 7 օրով և քանի որ Armeps համակարգով տվյալ փուլում մրցույթի երկարացումը չի նախատեսված, տվյալ մրցույթը կվերահայտարարվի A-17EN/A-20EN-EXT ծածկագրով: Երկացված ժամկետով A-17EN/A-20EN-EXT ծածկագրով մրցույթի հայտերի բացման օրը Armeps համակարգով նշանակված է ս.թ. հունիսի 15-ը ժամը 12:00:</u>

Հարգանքով՝

Արեգ Եղիյան
№ TIIG-11 մրցույթի քարտուղար
ՀՏԶՀ

8 հունիսի 2020թ.